***Արձանագրություն N «ԿՄՆԳՀ-ՊԸԱՇՁԲ-16/2»-03***
ԿՄՆԳՀ-ՊԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պարզեցված ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

*14 հունիսի 2016թ.,ժամը 15:00, գ. Նոր Գեղի*
Ֆ.Թևոսյան 64, Նոր Գեղիի համայնքապետարան

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ Ա.Առաքելյանը
անդամներ՝ Ա.Թևոսյանը, Տ.Գրիգորյանը
քարտուղար՝ Կ. Հայրապետյանը

1. ***«ԿՄՆԳՀ-ՊԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով մրցույթի պարզեցված ընթացակարգի հայտերի բացման վայրը, օրը և ժամը***

---

*(Ա.Առաքելյան)*

*1.1.* «ԿՄՆԳՀ-ՊԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով մրցույթի պարզեցված ընթացակարգի հայտերը բացվել են 2016 թվականի հունիսի 14-ին ժամը 15:00-ին,Նոր Գեղիի համայնքապետարանում, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան 64 հասցեում:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների(անունների) և հասցեների հրապարակում**

---

*(Ա.Առաքելյան)*

*2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.*

| N | Մասնակցի | |
|---|---|---|
| | Անվանումը | Հասցեն |
| 1 | «Վահրադյան Շին» ՍՊԸ | ք.Ստեփանավան, Չարենցի 175 |
| 2 | «ՍԱԲՐԻ» ՍՊԸ | Արարատի մարզ, գ. Այնթափ |
| 3 | «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ | Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի |
| 4 | «Աննա80»ՍՊԸ | ք.Վանաձոր,Դ.Դեմիրճյանի 20/23 |
| 5 | «ՌԱՖԷՆԵՐԳՈ»ՍՊԸ | Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի |

3. **Հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

---

*(Ա.Առաքելյան)*

**3.1** Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

4. **Բացված յուրաքանչյուր հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

---

*(Ա.Առաքելյան)*

4.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ հրավերի պայմաններին համապատասխան, բացի «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ի և «Աննա80» ՍՊԸ-ի կողմից կազմված փաթեթների մեջ ի հայտ են եկել անհամապատասխանություն վճարման պահանջագրերը սխալ է:
4.2 Մերժվում է «ԷՆԵՐԳՈՆԱՋ» ՍՊԸ-ի և «Աննա80» ՍՊԸ-ի հայտերը:
Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

5. **Տեղեկություններ մասնակիցներիկողմից առաջարկված գների վերաբերյալ**

---

*(Ա.Առաքելյան)*

| **h/h** | **Մասնակցի անվանումը** | Չափման | **Աշխատանքի անվանումը** |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| | | միավոր | «ՆՈՐ ԳԵՂԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» |
| 1 | «Վահրադյան Շին» ՍՊԸ | | 4 752 000/3 960 000/ |
| 2 | «ՍԱԲՐԻ» ՍՊԸ | | 5 450 000 |
| 3 | «ՌԱՖԷՆԵՐԳՈ»ՍՊԸ | | 3 597 000 |

**6. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

---

*(Ա.Առաքելյան)*

6.1 Հայտերի հետկանչման կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**7. Հանձնաժողովը որոշեց՝**

---

*(Ա.Առաքելյան)*

7.1 «ԿՄՆԳՀ-ՊԸԱՇՁԲ-16/2» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հայտ ներկայացրած, նվազագույն գին ներկայացրած, հրավերի պահանջներին բավարարող մասնակից՝ «ՌԱՖԷՆԵՐԳՈ»ՍՊԸ-ն, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ –ին:

7.2 2016 թվականի հունիսի 15-ին ուղարկել հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների տվյալների ճշտման մասին:

7.3 «ՌԱՖԷՆԵՐԳՈ»ՍՊԸ-ին ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնի պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող՝ պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը/տեղեկությունները, որոնք սահմանված են հրավերի II մասում/: Ինչպես նաև մասնակցին առաջարկել նախատեսված ժամկետում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ, չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ: Քանի որ ներկայացված գնային առաջարկը ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

**8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

*(Ա.Առաքելյան)*

8.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «ԿՄՆԳՀ-ՊԸԱՇՁԲ-16/2» պարզեցված ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը, Նոր Գեղիի համայնքապետարանում, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան 64 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ — Ա.Առաքելյան
Անդամներ — Ա.Թևոսյան
Տ.Գրիգորյան
քարտուղար — Կ. Հայրապետյան